

1.3. ՉՆԵՐ, ՍԱԿԱԳՆԵՐ

2000թ. հունվար-սեպտեմբերին զների փոփոխություններն, ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական զների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի զների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման զների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման զների ինդեքս ⁶⁾
Հունվար	101.9	100.1	99.2	97.9	98.9	101.2
Փետրվար	100.1	100.0	100.0	102.1	96.8	99.5
Մարտ	99.6	101.7	101.0	100.1	100.1	96.8
Ապրիլ	99.2	98.5	100.0	100.0	89.6	98.1
Մայիս	99.7	101.3	100.0	100.7	91.4	102.5
Հունիս	99.7	99.0	100.0	100.8	71.9	104.7
Հուլիս	98.0	100.3	99.9	102.0	81.8	104.9
Օգոստոսին	98.7	98.2	100.0	100.1	95.0	101.2
Սեպտեմբեր	100.3	100.3	100.9	98.9	96.1	98.5
2000թ. սեպտեմբերը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ	97.2	99.3*)	100.9	102.7	74.8*)	108.3*)
2000թ. հունվար-սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	99.2	100.9	100.5	100.0	86.4	102.6

*) 2000թ. սեպտեմբերի և 1999թ. դեկտեմբերի փաստացի զներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում զների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 նարզերում (բացի Կրարատի նարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է 111 արդյունաբերական բազային կազմակերպություններում՝ 283 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:


³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման զների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման զների և ծավալների հետազոտման տվյալների:

ԳՆԵՐԻ, ՍԱԿԱԳՆԵՐԻ ԱՃԻ ՏՆՄԱԵՐԸ 1999-2000ԹԹ. ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԵՐԻՆ, ՏՈԿՈՍՆԵՐՈՎ



1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Սպառողական գներ. Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 2000թ. հունվար-սեպտեմբերին արձանագրվել են փոփոխություններ թե՛ աճման, թե՛ նվազման միտումով: Հունվար-փետրվար ամիսներին գրանցված սղաճին մարտ-օգոստոսին հաջորդեց գների ընդհանուր մակարդակի 5 տոկոս նվազում, իսկ ընթացիկ տարվա սեպտեմբերին դարձյալ սպառողական շուկայում գրանցվեց որոշակի սղաճ: Վերջինս հիմնականում պայմանավորված էր պարենային ապրանքների գնային փոփոխությամբ՝ կապված պարենային որոշ ապրանքատեսակների սեզոնայնության, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխության հետ:

Սպառողական գների ինդեքսը 1999-2000թթ.

(տոկոսներով)

	Ընդամենը		այդ թվում					
	նախորդ ամսվա համեմատ	նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ	պարենային ապրանքներ		ոչ պարենային ապրանքներ		ծառայություններ	
			նախորդ ամսվա համեմատ	նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ	նախորդ ամսվա համեմատ	նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ	նախորդ ամսվա համեմատ	նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ
1999 թվական								
Հունվար	104.0	104.0	102.7	102.7	100.2	100.2	113.1	113.1
Փետրվար	100.0	104.0	99.7	102.4	100.1	100.3	100.9	114.2
Մարտ	99.4	103.4	99.2	101.6	99.8	100.1	99.8	113.9
I եռամսյակ	103.4*)	103.4	101.6*)	101.6	100.1*)	100.1	113.9*)	113.9
Ապրիլ	100.4	103.8	100.7	102.3	99.9	100.0	100.1	114.0
Մայիս	100.5	104.3	101.0	103.2	100.0	99.9	100.0	114.0
Հունիս	100.0	104.3	99.7	102.9	99.9	99.8	100.7	114.8
II եռամսյակ	100.9*)	104.3	101.3*)	102.9	99.7*)	99.8	100.8*)	114.8
Հուլիս	96.8	100.9	94.5	97.2	99.2	99.0	100.0	114.8
Օգոստոս	99.1	100.0	96.5	93.8	102.5	101.5	100.2	115.0
Սեպտեմբեր	100.3	100.3	98.4	92.3	100.7	102.2	100.5	115.6
III եռամսյակ	96.2*)	100.3	89.7*)	92.3	102.4*)	102.2	100.7*)	115.6
Հոկտեմբեր	100.5	100.8	100.0	92.3	100.0	102.3	99.8	115.3
Նոյեմբեր	100.2	101.0	100.2	92.5	100.1	102.3	99.8	115.1
Դեկտեմբեր	101.0	102.0	101.6	94.0	100.5	102.9	100.1	115.2
IV եռամսյակ	101.7*)	102.0	101.8*)	94.0	100.7*)	102.9	99.7*)	115.2
2000 թվական								
Հունվար	101.9	101.9	103.0	103.0	99.7	99.7	100.2	100.2
Փետրվար	100.1	102.0	100.0	103.1	99.3	99.1	100.0	100.2
Մարտ	99.6	101.6	98.6	101.7	101.7	100.8	100.1	100.3
I եռամսյակ	101.6*)	101.6	101.7*)	101.7	100.8*)	100.8	100.3*)	100.3
Ապրիլ	99.2	100.8	98.5	100.1	100.3	101.1	100.1	100.4
Մայիս	99.7	100.5	99.7	99.8	99.1	100.2	100.2	100.6
Հունիս	99.7	100.2	99.1	98.9	101.5	101.7	100.3	100.9
II եռամսյակ	98.6*)	100.2	97.2*)	98.9	100.9*)	101.7	100.6*)	100.9
Հուլիս	98.0	98.2	96.2	95.2	101.3	103.1	100.4	101.3
Օգոստոս	98.7	96.9	98.3	93.6	98.5	101.5	99.9	101.2
Սեպտեմբեր	100.3	97.2	100.7	94.2	99.4	100.9	100.2	101.4
III եռամսյակ	97.0*)	97.2	95.2*)	94.2	99.2*)	100.9	100.5*)	101.4

*) եռամսյակի վերջին ամիսը նախորդ եռամսյակի վերջին ամսվա համեմատ:

2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100.3 տոկոս՝ կրկնելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (100.3 տոկոս): Ընթացիկ ամսում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների հավելաճը կազմել է 0.5 տոկոս, ծառայությունների սակագներինը՝ 0.2 տոկոս, իսկ ոչ պարենային ապրանքների գծով գրանցվել է գների 0.6 տոկոս նվազում:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Սպառողական գների ինդեքսը 2000թ. սեպտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 97.2 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 100.3 տոկոսի դիմաց: Նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 95.5 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.9, իսկ ծառայությունների սակագներինը՝ 101.4 տոկոս:

2000թ. հունվար-սեպտեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.3 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.05 տոկոս հավելածի դիմաց:


2000թ. հունվար-սեպտեմբերին 1999թ. նույն ժամանակահատվածի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.2 տոկոս, այդ թվում՝ պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 97.6 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.4, ծառայությունների սակագներինը՝ 101.5 տոկոս, իսկ սեպտեմբերին 1999թ. սեպտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 98.9 տոկոս, 98.1, 101.5 և 101.1 տոկոս:

Գների միջին ամսական փոփոխությունները 1999-2000թթ., հունվար-սեպտեմբերին՝ ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների ու ապրանքախմբերի

(տոկոսներով)


	1999 թվական			2000 թվական		
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ
Սպառողական գների ինդեքս	101.1	100.3	98.7	100.5	99.5	99.0
<i>այդ թվում՝</i>						
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	100.5	100.3	97.8	100.6	99.3	98.6
ոչ պարենային ապրանքների	100.1	99.9	100.8	100.3	100.3	99.8
ծառայությունների	104.4	100.2	100.2	100.1	100.2	100.2
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	100.9	98.9	101.1	100.6	98.8	100.3
Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում	101.3	100.1	100.1	100.1	100.0	100.2
Բեռնափոխադրումների սակագների ինդեքս	99.8	100.1	100.7	100.1	100.5	100.3
Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս	97.3	100.7	95.0	98.9	94.8	96.2
Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս	98.6	102.9	98.5	98.8	103.8	100.1

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 1999 - 2000թթ. հունվար-սեպտեմբերին տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը = 100)



2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ սպառողական շուկայում արձանագրված 0.3 տոկոս գնաճի պայմաններում արտարժույթի շուկայում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.1 տոկոս նվազում: 2000թ. սեպտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքն աճել է 3.0 տոկոսով, իսկ սպառողական գների գծով գրանցվել է 2.8 տոկոս նվազում: 1999թ. համապատասխան ժամանակահատվածում սպառողական գների և փոխարժեքի մակարդակն աճել է համապատասխանաբար 3.3 և 0.3 տոկոսով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2000թ. հունվար-սեպտեմբերին տոկոսներով (նախորդ ամիսը = 100)



Պարենային ապրանքների գներ: Պարենային ապրանքների շուկայում, ի տարբերություն նախորդ 6 ամիսների, որոնց ընթացքում գրանցվել էր գների 9.2 տոկոս նվազում, 2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է 0.7 տոկոս գնաճ, ինչը, թերևս, սեզոնայնության գործոնի հետ մեկտեղ, անբարենպաստ բնակլիմայական պայմաններով բնութագրվող երաշտի արդյունք է: Դրա վառ ապացույցն է սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրված 9.1 տոկոս գնաճը: Ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբերին նշված ապրանքախմբի ինդեքսը կազմել է 96.0 տոկոս, ինչը 24.0 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը (72.0 տոկոս): Դիտարկված բնակավայրերից 6-ում ընթացիկ ամսում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 0.1-27.5 տոկոս գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Գյումրիում և Թալինում): Երևանում բանջարեղենի և կարտոֆիլի գնաճը կազմել է 11.2 տոկոս: Հետազոտվող մյուս 4 բնակավայրերում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 9.5-3.4 տոկոսով: Ընթացիկ ամսում նկատելիորեն աճել են կարտոֆիլի (28.5 տոկոս), լոլիկի (7.5), սմբուկի (6.0), սեղանի ճակնդեղի (3.6 տոկոս) գները: Միաժամանակ արձանագրվել է գլուխ սոխի (26.1 տոկոս), սխտորի (23.4), գազարի (6.3 տոկոս), վարունգի (14.1) գների նվազում:

2000թ. սեպտեմբերին զգալիորեն աճել են ձկնամթերքի (13.5 տոկոս՝ կապված սիգի՝14.8, ապխտած և աղ դրած ձկան՝ 10.1, սառեցրած ձկան՝ 5.1 տոկոս գնաճի հետ) և ձվի (11.5 տոկոս) գները: Ընթացիկ ամսում շարունակվել է օգոստոսին գրանցված շաքարավազի գնաճի միտումը՝ կազմելով 0.8 տոկոս, իսկ 1999թ. դեկտեմբերի համեմատ՝ 11.3 տոկոս: 2000թ. հունվար-ապրիլին գրանցված շաքարավազի գների 9.4 տոկոս նվազմանը, մայիս-սեպտեմբեր ամիսներին հաջորդել է 22.8 տոկոս գնաճ: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 7-ում սեպտեմբերին արձանագրվել է շաքարավազի 1.4-6.2 տոկոս գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Դիլիջանում): Գյումրիում պահպանվել է շաքարավազի գնի նախորդ ամսվա մակարդակը, իսկ Թալինում և Երևանում այն նվազել է համապատասխանաբար 1.3 և 0.3 տոկոսով:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2000թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ գների նվազման համեմատաբար բարձր տոկոսը (8.0 տոկոս) բաժին է ընկնում մրգի ապրանքախմբին (սեզոնայնությամբ պայմանավորված): Դրան մեծապես նպաստել է խաղողի (43.5 տոկոս), տանձի (27.1), դեղձի (18.7), խնձորի (10.2), ինչպես նաև բանջարա-բոստանային մշակաբույսերից՝ սեխի (20.0) և ձմերուկի (5.0 տոկոս) գների նվազումը: Միաժամանակ, սեզոնայնությամբ պայմանավորված, աճել են նարնջի (11.9), ելակի (6.8) և ադամաթզի (3.4 տոկոս) գները: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 8-ում ընթացիկ ամսում գրանցվել է մրգի գների 17.2-5.2 տոկոս նվազում (գների համեմատաբար բարձր նվազում արձանագրվել է Վաղարշապատում և Դիլիջանում): Երևանում մրգի գինը նվազել է 6.8 տոկոսով, իսկ Կապանում և Գյումրիում արձանագրվել է գնաճ՝ կազմելով համապատասխանաբար 0.8 և 0.6 տոկոս:

2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ 0.4-0.1 տոկոսով նվազել են հացամթերքի, կենդանական և բուսական յուղի, հրուշակեղենի, կաթնամթերքի, սուրճի, թեյի, կակաոյի, ոչ ոգելից խմիչքի գները:

Մսամթերքի ապրանքախմբում ընթացիկ ամսում գրանցվել է 1.0 տոկոս գնի նվազում, ինչին մեծապես նպաստել է ոչխարի (2.7 տոկոս), տավարի (1.2) և խոզի մսի (1.2 տոկոս) գների նվազումը: Սեպտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ մսամթերքի գների ընդհանուր մակարդակը նվազել է 3.2 տոկոսով: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 6-ում ընթացիկ ամսում գրանցվել է մսամթերքի գնի 2.9-0.7 տոկոս նվազում, իսկ մյուս 4-ում՝ 0.2-2.0 տոկոս գնաճ: Երևանում մսամթերքի գինը նվազել է 1.7 տոկոսով:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում ընթացիկ տարվա սեպտեմբերին օգոստոսի համեմատ գրանցվել է գների 0.5 տոկոս նվազում, ընդ որում եթե ոգելից խմիչքի գծով արձանագրվել է 0.1 տոկոս գնաճ, ապա ծխախոտի գինը նվազել է 0.6 տոկոսով: Չնայած դրան, 2000թ. սեպտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ ծխախոտի գնաճը կազմել է 2.6 տոկոս:

Ստորև բերված են գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(տոկոսներով)

	2000 թ վ ա կ ա մ				
	մարտը 1999թ.	հունիսը 1999թ.	սեպտեմբերը 1999թ.	սեպտեմբերը 2000թ. օգոստոսի նկատմամբ	2000թ. հունվար-սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	102.0	99.7	95.5	100.5	97.6
Պարենային ապրանքներ	101.7	98.9	94.2	100.7	93.0
հացամթերք	99.2	98.3	95.4	99.6	97.1
մսամթերք	100.2	100.9	96.8	99.0	95.0
ծկնամթերք	104.9	81.0	81.1	13.5	85.5
կաթնամթերք	99.5	94.6	91.1	99.9	93.7
ծու	85.8	79.9	82.8	11.5	94.4
կենդանական և բուսական յուղ	95.5	92.3	90.6	99.7	89.7
միրգ	117.1	150.3	80.8	92.0	80.2
բանջարեղեն և կարտոֆիլ	131.1	100.1	96.0	109.1	85.3
շաքարավազ	91.4	101.7	111.3	100.8	92.2
սուրճ, թեյ, կակաո	95.6	92.6	92.0	99.9	92.3
հրուշակեղեն	98.4	97.5	96.4	99.7	96.6
ոչ ոգելից խմիչք	99.1	98.5	97.9	99.8	98.3
Ոգելից խմիչք և ծխախոտ	103.8	103.5	102.1	99.5	139.2

Մի խումբ պարենային ապրանքների գների համեմատությունը տավարի մսի գնի նկատմամբ

(տոկոսներով)

	1999 թ վ ա կ ա մ		2000 թ վ ա կ ա մ		
	սեպտեմբեր	դեկտեմբեր	մարտ	հունիս	սեպտեմբեր
միս տավարի	100.0	100.0	100.0	100.0	100.0
ծուկ	25.3	38.4	40.1	29.9	32.7

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	1999 թվական		2000 թվական		
	սեպտեմբեր	դեկտեմբեր	մարտ	հունիս	սեպտեմբեր
կաթ	19.0	21.2	21.6	19.9	21.3
պանիր	117.2	124.8	122.7	116.5	118.0
կենդանական յուղ	135.5	144.7	137.1	130.0	135.1
բուսական յուղ	57.4	59.2	55.9	52.9	53.8
ծու (տասնյակ)	33.6	43.8	37.3	34.3	37.8
հաց	19.4	20.5	20.3	20.2	20.9
մակարոն	25.2	26.3	25.5	24.4	25.7
վերմիշել	25.1	26.3	25.6	24.4	25.7
շաքարավազ	20.7	21.3	19.4	21.3	24.9
բրինձ	27.8	29.6	29.4	28.9	30.8
աղ	9.0	9.4	9.4	9.2	9.8
կարտոֆիլ	10.2	9.4	10.8	8.7	11.7
խնձոր	15.4	20.8	24.9	29.8	11.4
թեյ	301.4	319.8	304.4	297.5	317.1
սուրճ	237.0	249.9	232.9	227.0	240.9

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2000թ. սեպտեմբերին նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ վերը նշված ապրանքատեսակների հիմնական մասի գները տավարի մսի գնի համեմատ (բացառությամբ խնձորի, բուսական և կենդանական յուղի, որոնց գները նվազել են 4.0-0.4 տոկոսով) ունեցել են աճման միտում՝ կազմելով 0.5-15.7 տոկոս: Ընթացիկ տարվա սեպտեմբերին և հունիսին գրանցված գների մակարդակների համեմատությունից ակնհայտ է դառնում, որ սեպտեմբերին տավարի մսի գնի նկատմամբ բերված ապրանքատեսակների գները, բացի խնձորի գնից, ինչը նվազել է 18.4 տոկոսով, գերազանցել են հունիսին գրանցված գների մակարդակը 0.6-19.6 տոկոսով:

Պարենային մի խումբ ապրանքատեսակների միջին հանրապետական գները 1999-2000թթ.

(դրամով)

	չափի միավորը	1999 թվական		2000 թվական			
		սեպտեմբեր	դեկտեմբեր	հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր
Միս տավարի	կգ	1106	1042	1049	1048	1059	992
Միս խոզի	կգ	1157	1087	1096	1086	1259	1288
Կենդանական յուղ	կգ	1499	1508	1509	1437	1376	1340
Բուսական յուղ	լ	635	617	618	586	560	534
Կաթ	լ	210	221	223	226	211	211
Պանիր	կգ	1296	1300	1302	1286	1234	1171
Շաքարավազ	կգ	229	222	216	203	226	247
Չու	տասնյակ	372	456	488	391	363	375
Հաց (I տեսակի)	կգ	215	214	214	213	213	207
Աղ	կգ	99	98	98	99	97	97
Կարտոֆիլ	կգ	113	98	108	113	93	116
Կաղամբ	կգ	53	50	63	64	56	138
Գլուխ սոխ	կգ	107	100	111	129	204	116
Գազար	կգ	104	91	102	111	128	111
խնձոր	կգ	170	217	304	261	316	113
Թեյ	կգ	3333	3332	3340	3190	3150	3146
Սուրճ	կգ	2621	2604	2497	2441	2404	2390

Ոչ պարենային ապրանքների գներ: 2000թ. հունվար-սեպտեմբերին ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 0.9 տոկոս հավելաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2.2 տոկոս հավելաճի դիմաց: Հարկ է նշել, որ ընթացիկ տարվա ինն ամիսներին ոչ պարենային ապրանքների տեղ գտած գնային փոփոխությունները հիմնականում պայմանավորված են բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությամբ: Ընթացիկ տարվա 9 ամիսներից 6-ում դիտվել է բենզինի գնաճ, ընդ որում բենզինի ամենաբարձր գնաճն արձանագրվել է մարտ (13.9 տոկոս) և հունիս (14.1 տոկոս) ամիսներին: Բենզինի գների նվազում գրանցվել է միայն մայիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ կազմելով

համապատասխանաբար 5.0, 6.5 և 3.9 տոկոս: Սեպտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ բենզինի ընդհանուր գնաճը կազմել է 24.5 տոկոս:

Դիզելային վառելիքի գծով հունվար, փետրվար և մայիս ամիսներին գրանցվել է գների 2.6-1.5 տոկոս նվազում, իսկ մյուս ամիսներին՝ արձանագրվել է 0.4-17.8 տոկոս գնաճ (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է հունիսին): 2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ դիզելային վառելիքի գնաճը կազմել է 5.5 տոկոս, իսկ 1999թ. դեկտեմբերի համեմատ՝ 28.2 տոկոս:

2000թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ 0.8-0.2 տոկոսով նվազել են դեղամիջոցների, անձնապիտո ապրանքների, հագուստի և կտորեղենի, կոշիկեղենի, խոհանոցային սպասքի, կենցաղային էլեկտրաապրանքների, մշակույթի, գեղահարդարման ապրանքների գները: Գորգեղենի գները մնացել են նախորդ ամսվա գների մակարդակին, իսկ գրեմական պիտույքների, շինանյութերի, տեքստիլեղենի, վառելիքի, կահույքի, ոսկերչական իրերի, այգեգործական ապրանքների, լվացամիջոցների գնաճը կազմել է 0.1-1.8 տոկոս:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները (տոկոսներով)

	2000 թվական				
	մարտը	հունիսը	սեպտեմբերը	սեպտեմբերը	հունվար- սեպտեմբերը
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ			2000թ. օգոստոսի նկատմամբ	1999թ. հունվար- սեպտեմբերի նկատմամբ
Ոչ պարենային ապրանքներ	100.8	101.7	100.9	99.4	103.4
<i>այդ թվում՝</i>					
հագուստ և կտորեղեն	98.4	96.2	95.0	99.5	95.1
վառելիք	100.3	93.7	94.4	100.8	110.5
կահույք	99.0	99.4	99.8	100.5	99.6
գորգեղեն	99.6	102.5	102.7	100.0	100.4
տեքստիլեղեն	97.9	102.4	103.7	100.9	94.4
խոհանոցային սպասք	99.2	99.7	99.3	99.6	97.7
լվացամիջոցներ	100.5	99.2	100.5	100.1	95.0
շինանյութեր	99.8	103.8	104.8	101.2	100.1
այգեգործական ապրանքներ	100.5	97.6	98.8	100.1	99.2
դեղամիջոցներ	98.9	99.6	94.4	99.2	90.1
մշակույթի ապրանքներ	99.0	95.9	95.8	99.7	93.5
գրեմական պիտույքներ	98.5	99.7	100.5	101.8	87.7
գեղահարդարման ապրանքներ	99.0	96.5	94.6	99.8	95.2
ոսկերչական ապրանքներ	100.2	94.4	96.4	100.2	95.5
անձնապիտո ապրանքներ	98.7	101.2	101.7	99.4	97.6

Ծառայությունների սակագներ: 2000թ. հունվար-սեպտեմբերին բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում սակագների էական փոփոխություններ չեն նկատվել: Ընթացիկ տարվա սեպտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է սակագների 1.4 տոկոս հավելաճ՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 15.6 տոկոս հավելաճի դիմաց:

2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագների 0.2 տոկոս հավելաճը պայմանավորված է մշակույթի (0.9 տոկոս), կենցաղային (0.8), կրթության (1.4), առողջապահության (0.1), բնակարանային-կոմունալ ծառայությունների (0.1 տոկոս) սակագների հավելաճով: Կապի, տրանսպորտի, հանրային սննդի ծառայությունների սակագների նվազումը կազմել է 0.3-0.1 տոկոս, իսկ իրավական և բանկային, հանգստի ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա սակագների մակարդակին:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(տոկոսներով)

	2000 թվական				
	մարտը 1999թ.	հունիսը	սեպտեմբերը	սեպտեմբերը 2000թ. օգոստոսի նկատմամբ	հունվար- սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ
	դեկտեմբերի նկատմամբ				
1 առայություններ, ընդամենը	100.3	100.9	101.4	100.2	101.5
<i>այդ թվում՝</i>					
կենցաղային	100.4	100.9	101.8	100.8	100.4
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.1	100.1	100.0
առողջապահության	102.1	102.4	102.6	100.1	103.3
տրանսպորտի	99.7	101.8	102.6	99.9	100.3
կապի	99.8	100.5	101.0	99.7	99.2
մշակույթի	99.3	100.1	100.9	100.9	104.0
կրթության	100.5	101.0	102.4	101.4	116.0
հանգստի	101.0	102.0	102.6	100.0	97.3
հանրային սննդի	101.5	101.7	101.8	99.9	101.9
իրավական և բանկային	100.0	100.0	104.0	100.0	101.3

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Հանրապետությունում դիտարկվող բնակավայրերից 5-ում 2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է սպառողական գների 0.2-1.7 տոկոս հավելած (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Գյումրիում): Երևանում սպառողական գներն աճել են 0.2 տոկոսով: Վանաձորում սպառողական գների մակարդակը մնացել է անփոփոխ, իսկ մյուս 4 հետազոտվող բնակավայրերում արձանագրվել է գների 1.1-0.1 տոկոս նվազում (նվազման ամենաբարձր տոկոսը գրանցվել է Մարտունիում):

Սպառողական գների ինդեքսը 2000թ. սեպտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ըստ դիտարկվող բնակավայրերի

(տոկոսներով)

	1999 թվական			2000 թվական		
	բնակավայրի տեսակարար կշիռը	սպառողական գների ինդեքսը (1999թ սեպտեմբերի նկատմամբ)	միջին ամսական աճը	բնակավայրի տեսակարար կշիռը	սպառողական գների ինդեքսը (2000թ. սեպտեմբերի նկատմամբ)	միջին ամսական աճը
Հայաստանի Հանրապետություն, ընդամենը	100.0	100.3	100.05	100.0	97.2	99.7
<i>այդ թվում.</i>						
Երևան	55.34	99.6	99.9	57.36	96.8	99.6
Գյումրի	7.85	98.1	99.8	7.09	98.7	99.9
Վանաձոր	7.49	99.8	99.9	7.33	97.9	99.8
Վաղարշապատ	6.29	99.3	99.9	5.90	98.4	99.8
Թալին	3.02	102.8	100.3	2.92	98.6	99.9
Դիլիջան	3.04	102.8	100.3	3.03	97.8	99.8
Հրազդան, Չարենցավան	7.25	103.2	100.4	6.95	95.2	99.5
Եղեգնաձոր	1.30	104.1	100.5	1.22	98.1	99.8
Մարտունի	5.21	104.4	100.5	5.10	97.8	99.8
Կապան	3.21	101.9	100.2	3.09	98.7	99.9

Պարենային ապրանքների գծով ընթացիկ ամսում դիտարկված բնակավայրերից 6-ում արձանագրվել է 0.5-2.4 տոկոս գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Գյումրիում): Վանաձորում և Կապանում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ Մարտունիում և Եղեգնաձորում գրանցվել է գների նվազում՝ կազմելով համապատասխանաբար 1.7 և 1.2 տոկոս:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2000թ. սեպտեմբերի 30-դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չուր, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ՀՀ, ընդամենը	990	1165	1345	534	392	247	116	100	94	111
<i>այդ թվում՝</i>										
Երևան	979	1208	1356	543	393	247	123	99	93	104
Գյումրի	950	1050	1267	527	388	253	130	97	117	120
Վանաձոր	950	1050	1275	520	350	245	95	100	75	150
Վաղարշապատ	1100	1100	1300	500	380	240	100	80	100	120
Թալին	1100	1200	1300	500	400	240	130	100	130	130
Դիլիջան	900	1200	1375	500	450	250	110	100	70	100
Հրազդան, Չարենցավան	1100	1200	1300	550	400	240	110	120	80	100
Եղեգնաձոր	1000	1100	1300	450	350	245	100	100	100	100
Մարտունի	850	1050	1400	550	400	250	90	100	80	100
Կապան	1120	1100	1600	520	410	266	108	120	142	142

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, բուսական յուղի 1լիտրի, ձվի տասնյակի հաշվարկով) 2000թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5092 դրամ, ինչը 1.1 տոկոսով ցածր է նույնաժամանակաշրջանի օգոստոսի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (5147 դրամ): Նշված ժամանակահատվածում վերոհիշյալ պարենային ապրանքներից 5-ի գներն աճել են 0.4-13.3 տոկոսով, իսկ մյուս 5-ի գծով արձանագրվել է գների 44.2-0.2 տոկոս նվազում: Դիտարկված բնակավայրերում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Վանաձորում (4810 դրամ), իսկ ամենաբարձրը՝ Կապանում (5528 դրամ):

2000թ. սեպտեմբերին օգոստոսի համեմատ դիտարկված բնակավայրերից 9-ում արձանագրվել է ոչ պարենային ապրանքների գների 0.8-0.1 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է Վաղարշապատում և Վանաձորում): Երևանում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.6 տոկոսով, իսկ Եղեգնաձորում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում դիտարկված բնակավայրերից 3-ում գրանցվել է սակագների 0.4-3.1 տոկոս հավելաճ (ամենաբարձր հավելաճն արձանագրվել է ք. Գյումրիում): Երևանում, Թալինում, Հրազդանում (Չարենցավանում) պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մյուս 4 բնակավայրերում գրանցվել է սակագների 0.3-0.2 տոկոս նվազում:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2000թ. սեպտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքախմբերի

(տոկոսներով)

	Սպառողական գների ինդեքսը	<i>այդ թվում՝</i>				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառողական ապրանքների	<i>դրանցից</i>			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
ՀՀ, ընդամենը	97.2	96.5	95.5	94.2	100.9	101.4
<i>այդ թվում՝</i>						
Երևան	96.8	96.0	95.0	93.2	100.4	101.5
Գյումրի	98.7	97.9	96.9	96.1	102.3	103.3


1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
Վանաձոր	97.9	97.3	96.4	95.8	101.4	102.0
Վաղարշապատ	98.4	98.1	97.0	96.2	102.9	100.6
Թալին	98.6	98.3	97.9	97.5	100.5	100.5
Դիլիջան	97.8	97.4	96.0	95.9	103.7	100.0
Հրազդան, Չարենցավան	95.2	94.4	93.5	92.5	98.8	99.9
Եղեգնաձոր	98.1	97.1	96.4	96.4	100.4	103.7
Մարտունի	97.8	97.1	95.7	95.0	103.5	102.0
Կապան	98.7	98.6	98.4	96.7	99.4	99.3

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս: 2000թ. սեպտեմբերին 1999թ. դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 99.3 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժանակահատվածի 102.7 տոկոսի դիմաց:

2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի 0.3 տոկոս գնաճ: Վերջինս պայամանավորված է թանկարժեք ու կիսաթանկարժեք իրերի (19.6 տոկոս), անտառային, փայտամշակման և թղթի-ցելյուլոզի (7.8), քիմիական, նավթաքիմիական և կենսատեխնոլոգիական (3.7), շինանյութերի (2.7), էներգետիկայի (2.2), մեքենաշինության (2.2 տոկոս) գնաճով: Դրան զուգընթաց, հրատարակչական գործերի արտադրությունում, սննդի (ներառյալ ալյուրի և համակցված կերերի), ռադիոէլեկտրոնիկայի, գունավոր մետալուրգիայի արդյունաբերությունում թողարկած արտադրանքի գները նվազել են 6.1-0.3 տոկոսով:

Արդյունաբերական արտադրանքի գների և սպառողական գների ինդեքսերը 1999-2000 թթ. (նախորդ ամիսը = 100)




2000թ. սեպտեմբերին նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 103.5 տոկոս:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս: 2000թ. սեպտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ամփոփ ինդեքսը կազմել է 102.7 տոկոս:

Ընթացիկ տարվա սեպտեմբերին օգոստոսի նկատմամբ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են 1.1 տոկոսով, ընդ որում խողովակաշարային, երկաթուղային և օդային տրանսպորտով բեռնափոխադրումների

սակագները նվազել են համապատասխանաբար 1.2, 0.7 և 0.1 տոկոսով: Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների գծով արձանագրվել է հավելաճ կազմելով 2.2 տոկոս, ինչը հիմնականում պայմանավորված է դիզելային վառելիքի գնաճով:

Ընդհանուր օգտագործման տրանսպորտում բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները 1999-2000 թթ. հունվար-սեպտեմբերին
(նախորդ տարվա դեկտեմբերը =100)



2000թ. սեպտեմբերի նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների մակարդակն աճել է 1.2 տոկոսով:

Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս: 2000թ. սեպտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 74.8 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 80.1 տոկոսի դիմաց: Ընթացիկ տարում, բացառությամբ մարտի, գրանցվել է գյուղատնտեսական մթերքների իրացման գների 28.1-1.1 տոկոս նվազում (նվազման ամենաբարձր տոկոսը բաժին է ընկնում հունիսին):

2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ գրանցվել է գյուղատնտեսական մթերքների իրացման գների 3.9 տոկոս նվազում: Վերջինս պայմանավորված է անհատ քաղաքացիներին և շուկայում իրացված գյուղմթերքների գների համապատասխանաբար 5.6 և 1.7 տոկոս նվազմամբ, իսկ մթերող կազմակերպությունների գծով արձանագրվել է 4.3 տոկոս գնաճ:

2000թ. սեպտեմբերին շարունակվել է նախորդ հինգ ամիսներին արձանագրված բուսաբուծական մթերքների իրացման գների նվազման միտումը և կազմել 5.8 տոկոս, ընդ որում անհատ քաղաքացիներին և շուկայում իրացված բուսաբուծական մթերքների գները նվազել են 8.4 և 3.5 տոկոսով, իսկ մթերող կազմակերպությունների գծով արձանագրվել է 4.1 տոկոս գնաճ: Բուսաբուծական մթերքների իրացման գների նվազմանը մեծապես նպաստել է սեզոնայնությամբ պայմանավորված մրգի (13.5 տոկոս), բոստանային մշակաբույսերի (13.0), բանջարաղեմի (3.8 տոկոս) գների նվազումը: Միաժամանակ, կերային մշակաբույսերի ապրանքախմբում արձանագրվել է 31.7 տոկոս գնաճ, ընդ որում միամյա խոտերի իրացման գնաճը կազմել է 52.1 տոկոս, բազմամյա խոտերինը՝ 19.8 տոկոս: Հացահատիկային մշակաբույսերի գծով գրանցվել է և 4.9 տոկոս իրացման գնաճ (ցորենի գնաճը կազմել է 12.0 տոկոս): Նշված ապրանքախմբերում արձանագրված իրացման գնաճը, թերևս, պայմանավորված է անբարենպաստ բնակլիմայական պայմաններով: Մեղրի իրացման գնաճը կազմել է 8.5 տոկոս, իսկ տեխնիկական մշակաբույսերի գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետության դիտարկված մարզերից 5-ում գրանցվել է բուսաբուծական մթերքների իրացման գների 13.0-5.8 տոկոս նվազում (համեմատաբար բարձր նվազում արձանագրվել է Արագածոտնում), իսկ մյուս 5-ում՝ 0.4-8.8 տոկոս գնաճ:

Անասնապահական մթերքների ոլորտում ընթացիկ տարվա հունվարից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում գյուղմթերքների իրացման գները հիմնականում ունեցել են նվազման միտում՝ կազմելով 3.7-0.8 տոկոս: Գնաճ արձանագրվել է միայն փետրվարին՝ կազմելով 0.7 տոկոս:

2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ անասնապահական մթերքների իրացման գների մակարդակը նվազել է 0.8 տոկոսով, ընդ որում անհատ քաղաքացիներին իրացված անասնապահական մթերքների գները նվազել են 1.3 տոկոսով, իսկ մթերող կազմակերպություններում և շուկայում գրանցվել է իրացման գնաճ՝ կազմելով համապատասխանաբար 8.4 և 0.2 տոկոս: Անասնապահական մթերքների գծով արձանագրված իրացման գների նվազմանը մեծապես նպաստել է մսամթերքի գների 3.4 տոկոս նվազումը: Միաժամանակ, կաթնամթերքի, ձվի, բրդի, կաշվեհումքի ապրանքախմբերում գրանցվել է 4.3-16.2 տոկոս գնաճ:

2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետության հետազոտված մարզերից 6-ում արձանագրվել է անասնապահական մթերքների իրացման գների 9.6-0.5 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Վայոց Ձորում) իսկ մյուս 4-ում՝ 1.3-6.5 տոկոս գնաճ:

Գյուղմթերքների իրացման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2000թ. հունվար-սեպտեմբերին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի (նախորդ ամիսը = 100,0)



2000թ. սեպտեմբերին՝ 1999թ. սեպտեմբերի նկատմամբ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 92.8 տոկոս, այդ թվում՝ բուսաբուծությանը՝ 93.4, անասնապահությանը՝ 91.8 տոկոս:

Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում՝ ըստ մարզերի, 2000թ. հունվար-սեպտեմբերին

(տոկոսներով)

	2000 թվականի սեպտեմբերը		2000թ. հունվար-սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	1999թ. հունվար-սեպտեմբերը 1998թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ
	2000թ. օգոստոսի նկատմամբ	1999թ. սեպտեմբերի նկատմամբ		
ԴԴ, ընդամենը	96.1	92.8	86.4	86.3
այդ թվում՝				
Արագածոտն	92.9	90.8	87.2	94.9
Արարատ	90.9	81.6	82.4	90.3
Արմավիր	93.1	95.8	80.2	81.7
Գեղարքունիք	102.5	90.5	83.9	89.2
Լոռի	93.7	82.8	91.3	86.9
Կոտայք	107.0	102.1	92.9	91.5
Շիրակ	103.3	97.3	90.8	83.4
Խյունիք	100.5	89.0	91.7	88.0
Վայոց Ձոր	95.9	92.8	93.1	97.7
Տավուշ	94.1	96.3	99.0	80.6

Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում՝ ըստ մարզերի, 2000թ. հունվար-սեպտեմբերին

(տոկոսներով)

	2000 թվականի սեպտեմբերը		2000թ. հունվար-սեպտեմբերը 1999թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	1999թ. հունվար-սեպտեմբերը 1998թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ
	2000թ. օգոստոսի նկատմամբ	1999թ. սեպտեմբերի նկատմամբ		
ԴԴ, ընդամենը	98.5	108.7	102.6	97.3
այդ թվում՝				
Արագածոտն	107.1	108.4	101.7	97.0
Արարատ	103.6	104.5	92.0	94.9
Արմավիր	98.6	110.5	103.9	98.0
Գեղարքունիք	104.7	110.9	108.3	98.8
Լոռի	100.5	107.5	106.9	95.5
Կոտայք	95.2	94.5	97.6	93.3
Շիրակ	105.7	111.0	105.2	96.1
Խյունիք	95.9	104.0	103.2	106.5
Վայոց Ձոր	101.8	105.7	107.7	112.2
Տավուշ	113.5	109.5	98.3	100.4

2000թ. հունվար-սեպտեմբերին արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գնաճ 8.3 տոկոսով՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նույն ցուցանիշի 0.1 տոկոս նվազման դիմաց:

2000թ. սեպտեմբերին, ի տարբերություն նախորդ 4 ամիսների, գրանցվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 1.5 տոկոս նվազում: Վերջինս հիմնականում պայմանավորված է մեքենա-սարքավորումների և դրանց պահեստամասերի (20.0 տոկոս), բույսերի պաշտպանության միջոցների (16.4), սերմացուների ու տնկիների (11.3), անասունների (6.3), էներգիայի ու քսայուղերի (3.1), գյուղատնտեսական մանր գործիքների (2.0) գնման գների և գյուղատնտեսության վճարովի ծառայությունների սակագների (9.0 տոկոս) նվազմամբ: Միաժամանակ, անասնակերի, պարարտանյութերի և շինանյութերի ապրանքախմբերում արձանագրվել է 7.1-17.8 տոկոս գնման գնաճ:

2000թ. սեպտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ, հանրապետության դիտարկված մարզերից 7-ում արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման 0.5-13.5 տոկոս գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Տավուշում), իսկ Կոտայքում, Սյունիքում և Արմավիրում՝ գների 4.8-1.4 տոկոս նվազում: